

...

1990-ին կնքուած եւ յայտարարուած Հայաստանի Անկախութեան Հռչակագիրը բառացիօրէն կը հաստատէ անոր հիմունք կազմող «**[պատասխանատւոյան գիտակցութիւնը] հայ ժողովրդի ճակատագրի առջեւ համայն հայոյթյան իղձերի իրականացման եւ պատմական արդարության վերականգնման գործում**»:

- . Համայն հայութեան իղձեր,
- . պատմական արդարութեան վերականգնում,
- . եւ առ այդ՝ պետական պատասխանատուութեան գիտակցութիւն, հայ ժողովրդի ճակատագրի առջեւ :

Լեւոն Տէր-Պետրոսեան իր իսկ ձեռքով ստորագրած է սոյն Հռչակագիրը:

Այժմ ան կու գայ մեզի բացատրելու թէ այդ ամէնը կը նշանակէ մի բան միայն՝ «**աջակցիլ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը**»: Բացատրելով որեւէ բան, անկէ անդին...

Ըստ իրեն ուրեմն, «**համայն հայութեան իղձեր**»ը, «**պատմական արդարութեան վերականգնում**»-ը, Հայաստանի համար, վերջ է գտնելու պարզապէս **Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը**, վերջակէտ:

Իսկ նոյնիսկ եթէ պահ մը մէկդի դնենք այս մեկնականութեան ակնյայտ անհեթեթութիւնը, եւ սեպենք որ ճիշդ է Լեւոն Տէր-Պետրոսեան, թէ խնդրոյ առարկայ նիւթով Հայաստանի պատասխանատուութիւնը կը սկսի եւ կը վերջանայ, պարզապէս ու միայն եթէ ան բարեհաճի «**աջակցիլ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը**»:

Եթէ այդպէս է, ինչպէ՞ս կ'ըլլայ որ նոյն իր «**ուղերձի նախագիծ**»ին մէջ, կը գտնենք հետեւեալ կէտերը՝

. «**Հայաստանը նաեւ Թուրքիայի առջեւ պահանջ չի դնում ճանաչելու Հայոց ցեղասպանութիւնը**» (պարբերութիւն 10):

. «**Դիմելով եւրոպական երկրների կառավարություններին, Հայաստանի Հանրապետությունը խնդրում է Հայոց ցեղասպանության ճանաչումը նախապայման չդիտել Եւրոմիությանը Թուրքիայի անդամակցության հարցի շուրջ ընթացող բանակցություններում**» (պարբերութիւն 11):

. «Հայ-թուրքական արձանագրությունները» պետք է որ անպայման կիրարկուին, առանց Հայոց ցեղասպանության ճանաչման նախապայմանի (պարբերություն 12):

Եթե այդ ամենը կը նշանակեն «*աջակցիլ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանը*», հետաքրքրական կ'ըլլայ երեւակայելը թէ ի՞նչ էր լինելու արդեօք, եթէ Հայաստանը... չաջակցէր, այդ ուղղութեամբ:

Ի՞նչ կը մնայ այդպիսի աջակցութիւնից, եթէ Հայաստանը, խնդրոյ առարկայ ուղերձին վերեւ պարզուած կէտերու հիման վրայ, ուղղակի կանխէ, խոչընդոտէ, խափանէ, չէզոքացնէ եւ խորտակէ Հայոց Ցեղասպանության միայն ճանաչման իսկ միտող ջանքերն ու աշխատանքները...

Հայաստանի Անկախութեան Հռչակագրի յստակ եւ տառացի բանաձեւման հակառակ, Լեւոն Տէր-Պետրոսեանի մեկնաբանութեան համեմատ, տառացիօրէն՝ «*հայ ժողովրդի ճակատագրի առջեւ*» Հայաստանի պատասխանատուութիւնը կարդալով, պետք չէ հասկնալ որ... հայ ժողովրդի ճակատագրի առջեւ Հայաստան ստանձնել է այդպիսի պատասխանատուութիւն:

Այլ, այդ պատասխանատուութիւնը՝ «*մարդու իրավունքների եւ մարդկության*» նկատմամբ է, եւ չէ հաստատուած իսկ Անկախութեան Հռչակագրի մէջ, այլ «*բխում է միջազգային կոնվենցիաներից*... («*Ուղերձի նախագիծ*», պարբերություն 8):

Իսկ այդտեղ «*բացառապէս*» բառի գործածութեամբ, կը հաղորդուինք նաեւ Լեւոն Տէր-Պետրոսեանի այն ենթա-հաստատումով թէ՛ «*մարդու իրավունքների եւ մարդկության*» մաս չի կազմէր հայ ժողովուրդը...

Եկէք սակայն այստեղ մի պահ կանգ առնենք: Այստեղ եւս, բանավէճի սիրոյն միայն, ընդունինք եւ սեպենք որ ճիշդ է Լեւոն Տէր-Պետրոսեանի այս իւրայատուկ մեկնաբանութիւնը:

Ենթադրենք ուրեմն որ Հայաստանի պատասխանատուութիւնը, Հայոց Ցեղասպանութեան նկատմամբ, հայ ժողովուրդի առջեւ չէ, ոչ, այլ կը զետեղուի «*բացառապէս մարդու իրավունքների եւ մարդկության դեմ գործված հանցագործության*» մակարդակների վրայ:

Սակայն այդ ըմբռնողութեան հիման վրայ եւս, նոյնիսկ աւելի շեշտակիօրէն՝ այդ պատասխանատուութիւնը չի սահմանափակուիր միայն Յեղասպանութեան ճանաչմամբ, այլ անպայման կ'ընդգրկէ եւ կը ներառէ նաեւ արդարութեան, պատիժի, հատուցման, Ոճիրի հետեւանքները կարելի եղածին չափ սրբագրելու, բոլոր նկատողութիւնները:

Ի՞նչ հիման վրայ:

Նախ... իր, Լեւոն Տէր-Պետրոսեանի, իր այդ նոյն *ուղերձի նախագծին* մէջ ոգեկոչած Միջազգային Օրէնքի հիման վրայ, որ կը կազմէ սոյն նախագծի թիւ 6 պարբերութեան լրիւ բովանդակութիւնը:

Կը մնայ միայն որ, «*1948թ. դեկտեմբերի 9-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի ընդունած եւ 1951-ի հունվարի 12-ին ուժի մէջ մտած «Յեղասպանության հանցագործությունը կանխելու եւ դրա համար պատժի մասին» կոնվենցիային 2-րդ հոդված»*ը յիշատակելէ յետոյ, յարգարժան հեղինակը բարեհաճի յաւելեալ ճիգ մը եւս թափել, եւ մի հատ դարձեալ կարդայ եւ նկատէ սոյն Պայմանագրի իր մէջբերած վերնագրին մէջ իսկ գտնուող *պատիժ* բառը: Յետոյ էլ, մի հատ աչք մը նետէ նոյն Պայմանագրի հետեւեալ յօդուածներուն՝ 1, 3, 4, 5 , որոնց բոլորին մէջ տառացիօրէն նշուած են, ըստ Միջազգային Օրէնքի, ցեղասպանութեան ոճիրի առընչուող պատիժի եւ հատուցման հետեւանքն ու նկատողութիւնները:

Սակայն նիւթի այս բաժինը չի վերջանար միայն յիշեալ Պայմանագրով (կարող է նոյնիսկ որ չսկսի իսկ անով, նկատի ունենալով ժամանակագրական տուեալը: Այդ Պայմանագիրը գոյացած է Հայոց Յեղասպանութենէն մի քանի տասնամեակներ ետք... Այդ ալ ուրիշ նիւթ...):

Յեղասպանութեան ճանաչման պատասխանատուութիւնը, լինի հայ ժողովուրդի առջեւ կամ - քանի որ Լեւոն Տէր-Պետրոսեան զանազանութիւն է տեսնում այստեղ -՝ «*մարդու իրավունքների եւ մարդկության դեմ գործված հանցագործության»* դիտանկիւնից, չի՛ կարող չներառել արդարութեան պահանջը:

Արդարեւ, Հայ Դատի պահանջատիրութիւնը միայն իրաւունք չէ հայութեան համար, ի նպաստ միայն հայութեան, այլ նաեւ պարտաւորութիւն է՝ համայն մարդկութեան նկատմամբ, ի օգուտ անոր:

Թե ըստ Օրենքի եւ թե ըստ Բարոյութեան հիմնական ըմբռնողութեանց, ոճիր առանց հետեւանքի՝ գոյութիւն չունի, չի կրնար ունենալ:

Եթե խնդրոյ առարկայ հաստուցումը, իր բոլոր բաղադրիչներով, չդառնայ իրականութիւն, պիտի հաստատուի յղացք մը որ, յատկապէս օրինական տեսակէտից, գոյութիւն չունի, բացարձակապէս եւ հիմնականօրէն անընդունելի է՝ ոճիր/յանցանք, առանց հետեւանքի:

Ինչպէ՞ս կարելի է թողել եւ թոյլատրել որ ոճիրի մը հեղինակը - կամ օրինապէս պատասխանատուն - պահէ այդ ոճիրի ուղղակի արդիւնքը, շահը, որ ան օգտուի ոճիրի պտուղներէն: Ինչպէ՞ս կարելի է պատկերացնել օրինական եւ բայոյական այսպիսի նախընթացի մը գոյացումը, ուր ոճիրը՝ կը վարձատրուի:

Եթե հայոց ցեղասպանութեան առիթով հաստատուի այդպիսի կացութիւն, Թուրքիոյ օրինակը իրախուսանք, քաջալերանք եւ նոյնիսկ յաջող գործադրութեան ուսուցում կը դառնայ՝ ցեղասպանութեան փորձութիւնը կամ ծրագիրը ունեցող բոլոր այլ պետութիւններու...

Մարդկութեան Դեմ Ռճիրի մը հաստատումը պահանջելու ամենաէական մղումներէն մէկը՝ կանխել եւ արգիլել է անոնց կրկնութիւնը, ոեւէ տեղ եւ որեւէ ժողովուրդի նկատմամբ: Հետեւաբար, եթե հայութիւնը մինչեւ ծայր չտանի Հայ Դատը եւ դադրի հետապնդելէ անոր ամբողջական լուծումը, ներառեալ արդարութեան առաւելագոյն իրագործումը, հայութիւնը ինք պատասխանատու կը դառնայ ապագայի մէջ գործուելիք ոեւէ ցեղասպանութեան:

Նկատի ունենալով որ, արդարացիօրէն, անվերջ կը շեշտենք մեր խնդրոյ առարկայ պայքարի համամարդկային կոչումը, ուրեմն՝ արդարութեան պահանջատիրութեան վերաբերեալ մեր էական պարտաւորութիւնը չի սահմանուիր միայն մեր մարտիրոսներու հանդէպ, այլ կը տեղադրուի համայն Մարդկութեան նկատմամբ:

Վերեւ ներկայացուած տարրական բացատրութիւնների լոյսին տակ, երբ Լեւոն Տէր-Պետրոսեան կը գրէ թե Հայաստանի Հանրապետութեան պատասխանատուութիւնը, Հայոց Ցեղասպանութեան նիւթով, պէտք է դիտել *«բացառապէս մարդու իրավունքների եւ մարդկության դեմ գործված*

հանցագործության (...) համատեքստում», ինք իսկ կը հաստատէ ուրեմն թէ այդ նիւթը անպայման որ կը ներառէ ոճիրի հետեւանքների սրբագրութեան հրամայականը:

Լեւոն Տէր-Պետրոսեան, նիւթի առարկայ իր *ուղերձի նախագծում*, կը յայտնէ նաեւ թէ Հայաստանի Հանրապետութեան չի վիճակուիր հետապնդել Հայոց Յեղասպանութեան առընչուող պահանջատիրական բաժինը, այս անգամ՝ իրաւասութեան գետնի վրայ:

Այս կէտին վրայ եւս, եկէք սեպենք որ ԼՏՊի այս կարծիքը չի հակադրուիր այժմու Հայաստանի Անկախութեան Հռչակագրին բառացի հաստատումին թէ՛ սոյն Հանրապետութիւնը կը ստանձնէ իր «[պատասխանատւության գիտակցութիւնը] **հայ ժողովրդի ճակատագրի առջեւ համայն հայության իղձերի իրականացման եւ պատմական արդարության վերականգնման գործում**»: Ենթադրենք որ այժմու Հայաստանի Անկախության Հռչակագրի մէջ չկան, չենք տեսնում այդ յստակ բառերը: Դարձեալ բան չի փոխուիր կացութենէն:

Օրինական գետնի վրայ, Հայաստանի Հանրապետութեան Պետութիւնը ոչ միայն Հայ Դատի Պահանջատիրութեան տիտղոսակիրն է, այլ՝ միակ տիտղոսակիրն է:

Ներազգային զանազան եւ զարմանազան, խոհանոցային խնդիրները մէյ մը որ մաքրուին, զատուին, գտուին ու բացառուին այս էական նիւթէն, այս հաստատումը, թէ օրինապէս՝ միայն Հայոց Պետութիւնը տոգորուած է Հայ Դատի Պահանջատիրութիւնը հետապնդելու հեղինակութեամբ, նոյնքան անժխտելի է որքան Հայոց Յեղասպանութեան իրողութիւնը:

Հայոց Պետութիւնից գատ, ո՞ր մէկ կառոյցը ներկայացնում է լրիւ ու համայն Հայութիւնը... Իսկ նոյնիսկ եթէ երեւակայական նոր կառոյց մը գոյանալու է, այդ նպատակով, անոր մաս չի՞ կազմելու Հայաստանը, հայաստանաբնակ հայութիւնը...

Հայոց Պետութենէն գատ ոչ մի էութիւն գոյութիւն ունի որ օժտուած լինի համայն եւ ամբողջական հայութեան հաւաքական ազգային իրաւունքները հետապնդելու՝ օրինական անձնաւորութենէն:

Մնացեալ բոլոր մօտեցումները, ոչ միայն կը հակադրուին մէկ ազգ-մէկ ժողովուրդ-մէկ հայրենիք էական ըմբռնողութեան, որու վրայ կը հիմնուի արդի ժամանակներու հայութեան զարթօնքը, ազատագրական շարժումը եւ ազգային վերականգնումն ու վերելքը, այլ օրինապէս՝ անհնար են, բացայայտօրէն անհիմն են:

Հետեւաբար, եթէ որեւէ օրինական առարկութիւն կայ այժմու Հայաստանի Հանրապետութեան նիւթի առարկայ ամբողջական իրաւասութեան նկատմամբ, զայն արտայայտողը կրնայ ըլլալ միայն Հայ Դատի հակառակորդ կողմը, Թուրքիան, որովհետեւ յանցաւոր եւ յուսահատ կողմը պատրաստ է դիմելու ամէն միջոցներու, խուսափիլ ջանալու համար իր դատապարտումէն եւ անոր հետեւանքներէն: Իսկ որպէս յաւելեալ դիտաւորութիւն, ան այդպիսի առարկութիւններով նաեւ պիտի ջանայ անջատում ստեղծել միեւնոյն հայութեան աշխարհագրական ենթաբաժանումներուն միջեւ, իրամատ բանալ՝ իրարու սերտօրէն շաղկապուած, երեւութապէս կամ մակերեսային ձեւով երբեմն տարբեր երեւցող, սակայն խորքին մէջ եւ ըստ էութեան անքակտելի բաղադրիչներուն:

Եւ արդէն հաւանաբար այստեղ է Լեւոն Տէր-Պետրոսեանի ըմբռնողութեան հիմնական սահմանափակումը: Որպէս խելացի,զարգացած եւ բանիմաց անձնատրութիւն, կայ մի պարզ եւ տարրական յղացք, որ ան չկարողացաւ հասկանալ, եւ տակաւին չի հասկացել՝ Հայոց Ազգի մէկ ու միացեալ լինելու ըմբռնողութիւնը: Աւելի ճիշդ՝ հայութեան մէկ լինելու, իսկ այլապէս՝ ոչինչ լինելու, էական հասկացողութիւնը:

Պատմութեան խորքերէն մինչեւ օրս անթիւ եւ բացայայտ ապացոյցներ կարող ենք յիշել եւ ընդգծել, նիւթի այս կէտի կապակցութեամբ:

Սակայն նախ սկսինք նշելով... իրեն, ուղղակի Լեւոն-Տէր Պետրոսեանի կապուած նկատողութիւններ

- իր իսկ հիմնած եւ գլխաւորած նախնական շարժումը, որու միջոցաւ ինք դարձաւ Հայաստանի Հանրապետութեան նախագահ, կը կոչուէր Հայոց Համազգային Շարժում:

Ի՞նչ բանի կը վերաբերեր արդեօք «Համազգային» բառը, այդտեղ... Երևանի Կեդրոնի եւ Քանաքեռի թաղամասի միջեւ ազգային միացեալ ինքնութեա՞ն...

. ինք իր նախագահական հրամանագրով հիմնեց Հայաստան Համահայկական Հիմնադրամը:

Ի՞նչ է նշանակում այդ «համահայկական» բառը այդտեղ...

. «Հայաստանի հայ ժողովուրդ» եւ «Սփիւռքի հայ ժողովուրդ» զանազանութիւնը հիմնուած է, գերդաստանական/աշխարհագրական ծագումի չափանիշներո՞վ:

Սակայն այդ պարագային, բա, ինք... *ախպար* չի՞: Ըստ իր կենսագրականի՝ միանշանակ:

. Եթէ ամեն-հայ-իր-գործին-է-խառնուելու, եւ ազգային էական նիւթերում, Սփիւռքեան դաշտը պէտք է անջատել Մայր Հայրենիքից, խի՞ ուրեմն համայն հայութիւնը ոտքի ելաւ, աշխարհի տարածքին, ոհ, ասենք, պարզ օրինակի համար...երբ ինք, Լեւոն Տէր-Պետրոսեան որպէս *Ղարաբաղ Կոմիտէի* ղեկավար, ձերբակալուեցաւ խորհրդային իշխանութիւնների կողմէ... (ստորագրեալը իսկ, իրեն համար, գաւազանի հարուած է ստացել Գանատացի ոստիկաններից, Խորհրդային Միութեան հիւպատոսարանին առջեւ, բռունցքը բարձրացուցած՝ «*Ղարաբաղի մէ՛րն է... Լէ՛ւոն, Լէւոն*» գոռալով...)

Լեւոն Տէր-Պետրոսեան գիտական մտքի եւ զուտ բանականութեան տէր մարդ է, չի գոհանար գաղափարական-վերացական-յուզական նկատողութիւններով, հետեւաբար, վերոյիշեալ, առարկայականօրէն անհերքելի իրողութիւններէն անդին, իր ուշադրութեան յանձնենք նաեւ հետեւեալ մասնագիտական կէտերը՝

- Պետական շարունակականութեան սկզբունքի հիման վրայ, այժմու Հայաստանի Հանրապետութիւնը, 1992-ի Անկախութեան Յայտարարութեան մէջ (այդ մէկն ալ ստորագրուած Պարոն Առաջին Նախագահի ձեռքով), բառացիօրէն կ'ընդգծէ թէ ան ոչ միայն շարունակութիւնը, այլ նոյնիսկ զարգացումը կը հանդիսանայ 1918-ին հիմնուած Հայաստանի Հանրապետութեան: Մինչ այս վերջինի գոյութիւնը ինքնին Հայկական Հարցի ծնունդ է:

- Նոյն ուղղութեամբ, նշենք նաեւ Պետական Դրօշի, Զինանշանի եւ Քայլերգի նոյնութիւնը, 1918-ի եւ այժմու, իրարու շաղկապուած, Հայաստանի Հանրապետութիւններու միջեւ:

- Այժմու Հայաստանի Հանրապետութեան բնակչութեան յատկանշական համեմատութեան ծագումը Արեւմտեան Հայաստանի մէջ կը գտնուի: Անոնցմէ մէկ մասը զաւակներն ու թոռներն են Ցեղասպանութենէն ուղղակիօրէն ճողոպրած վերապրողներուն, որոնք 1918-ին ապաստան գտան այդտեղ, հայոց պետութեան շուքին տակ: Միւսները նոյնպէս, ծագումով, այսպէս կոչուած «արեւմտահայեր» են, որոնք բնակութիւն հաստատած են այդտեղ, աւելի ուշ տեղի ունեցած հայրենադարձութեան մի քանի փուլերու ընթացքին, որոնցմէ վերջինը տակաւին ընթացքի մէջ է (վերջին 23 տարիներու Սփիւռքէն բազմաթիւ երկիրներէ Մայր Հայրենիք փոխադրուողներ, ինչպէս նաեւ – յատկապէս Արցախի մէջ - հաստատուած Արեւմտեան Հայաստանի բնիկ համշենահայեր, իսկ դեռ վերջերս, Լեւոն Տէր-Պետրոսեանի «հայրենակից» սուրիահայերը... Բացի եթէ ան կը նախընտրէ որ ընդգծենք իր Մուսա Տաղի արմատները...):

- Ի հարկին ու երբ որ պետք է, Հայաստանի Հանրապետութեան Սահմանադրութեան եւ Օրէնքներու հիման վրայ, աշխարհքի տարածքին որեւէ հայ կրնայ հեշտօրէն դառնալ Հայաստանի Հանրապետութեան քաղաքացի:

- Առանց իսկ քաղաքացիութեան, ինչպէս ոեւէ օրինական կացութեան մէջ, իրաւունքի մը տէրը նաեւ իրաւունքը ունի զայն հետապնդելու իրաւասութիւնը փոխանցելու ու յանձնելու իր ընտրած օրինական անձնաւորութեան, այս պարագային՝ միջազգային համայնքի պաշտօնական անդամ հանդիսացող պետութիւն մը:

եւ այլն, եւ այլն...

Մի խօսքով՝

. սկսելով 1840-ական թուականներում, Թիֆլիսի եւ Պոլիսի մէջ հայ մտաւորականութեան արծարծած նախնական կայծերէն,

- . սկսելով յեղափոխական շարժումը կազմակերպող եւ հունաւորող, ռուս-թրքական սահմանի երկու կողմերն ալ գործող կուսակցութիւններէն – որոնց ղեկավարութիւնն ու գործակալները բաղկացած էին այսպէս կոչուած թէ՛ արեւմտահայերէ եւ թէ՛ կովկասահայերէ –,
 - . սկսելով Արեւմտեան Հայաստանի գիւղերու ինքնապաշտպանութենէն, եւ կովկասեան արշաւանքներէն ու զինամթերքի փոխադրութեան գործողութիւններէն,
 - . անցնելով Սասունէն, Տարօնէն, Կարսէն եւ Շուշիէն, եւ փոխադարձաբար, երկու ուղղութիւններով,
 - . պահ մը կանգ առնելով եւ ծունկի գալով Յեղասպանութեան անհուն գերեզմանին առջեւ,
 - . սակայն արդէն ինքզինք դարձեալ հաւաքելով եւ գերմարդկային ջանքերով ու մարտերով հիմնելէ ետք ժամանակակից Հայաստանի Հանրապետութիւնը,
 - . արդար մահապատիժի ենթարկելէ ետք իր անմիջական դահիճներու մէկ մասը ներառեալ անոնց գլխաւոր ճիւղերը,
 - . հայրենի հողի վրայ անասելի հալածանքներու ենթարկուելէ ետք Սթալինեան բռնատիրութեան տակ, եւ միաժամանակ՝ Արտերկրի մէջ յորդառատ արեան եւ բառացիօրէն ցելի մէջէն դարձեալ ոտքի կանգնելէ, աչքերը սրբելէ, ճակատը բարձրացնելէ եւ Հացոց Յեղասպանութեան նկատմամբ համայն աշխարհին լռութեան պատը խորտակելէ ետք արդի հայ մարտիկներու հարուածներով,
 - . Հայաստանի Խորհրդային Հանրապետութեան մէջ, բռունցքները բարձր, «մե՛ր հողերը, մե՛ր հողերը» գոռալէ եւ 70 տարիներ շարունակ Արարատի կոչն ու պատգամը անընդհատ պահպանելէ եւ ամէն առիթով արտայայտելէ ետք,
 - . միասնական ուժերով նետուելէ ետք Արցախի Ազատագրման Շարժումին եւ կռիւններուն մէջ,
- այս ամէնէն ետք,

Հայութիւնը, միա՛նաբար, վերջապէս կը վերատիրանար նախապէս հազիւ պահ մը գոյացած իր անկախ պետականութեան մնայուն իրականութեան, հայրենի հողի վրայ:

Եւ այս Հայաստանի առաջին Նախագահը եղաւ՝ Լեւոն տէր-Պետրոսեան:

Իսկ ան այսօր խօսում եւ գրում է Հայաստանի հայերի եւ Սփիւռքի հայերի անջատման մասին, զանազանում է Արեւմտեան Հայաստանի հայերը Կովկասի հայերից...

Այս գրութիւնը անշուշտ կարելի է տակաւին երկարօրէն շարունակել, կէտ առ կէտ ընդգծելով եւ հեշտօրէն ապացուցելով խնդրոյ առարկայ «*ուղերձի նախագիծ*»ի բովանդակութեան մնացեալ բազմաթիւ սխալները եւս: Սակայն հերիք է...

Ստորագրեալի խոր ու հաստատ համոզումն է որ Լեւոն Տէր-Պետրոսեան «ծախուած» անձ չէ, ոչ ալ հայութեան «դաւաճան» է: Ան գործակալը չէ որեւէ օտար պետութեան, եւ միտում կամ նպատակ չունի հայութեան կամ Հայաստանի դէմ գործելու:

Սակայն... երանի՛ թէ այդպէս ըլլար:

Որովհետեւ աւելի տխուր, ցաւազին, խանգարիչ եւ մտահոգիչ է որ հայորդի մը, այն ալ իւելացի եւ զարգացած, եւ բարձրաստիճան պաշտօնների տիրացած՝ հայ մը, առանց նիւթական շահագրգռութեան, կարող է այն մտածողութիւնը ունենալ զորս Լեւոն Տէր-Պետրոսեան արտայայտում է, տարիներէ ի վեր եւ տակաւին այս օրերուն եւս, իր «*Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցի առթիվ Հայաստանի կողմից միջազգային հանրությանը հասցեագրված ուղերձի նախագիծ*»ով:

Վերջում, ան հաշուետու է սակայն, Վերը: Այս նիւթին մէջ՝ Հայոց Ցեղասպանութեան Մարտիրոսներին...

Կ'աղօթենք ուրեմն իր հոգիի փրկութեան համար:

Մեթր Հայդուկ Շամլեան

Գանատա, 19 Ապրիլ 2015

<http://www.shoushisummercamp.org/>